ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 38-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝

~~38) սահմանում է Երևանում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները.~~

38. «սահմանում է Երևանում տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակի կիրառման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները»

Հոդված 2. Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 14.1 կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝

~~14.1) Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տալիս է Երևանում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվություն.~~

14.1 «Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տալիս է Երևանում տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակի կիրառման թույլտվություն»

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից 6 ամիս հետո: